ԼՂԻՄ. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆՄԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ

Կիրակի օրը և հուլիսի լույս 17-ի գիշերը Լեռնային Ղարաբաղում համեմատաբար հանգիստ վիճակ էր: Սակայն ինքնավար մարզի իրադրության կայունացման մասին խոսել դեռ վաղ է: Սկսված անդորրը, ինչպես գտնում է ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի նախագահի օգնական Բորիս Անդրեևիչ Նեֆեդովը, հիմնականում այն ներգործուն միջոցների արդյունքն է, որ հատուկ շրջանի հրամանատարությունը ձեռնարկում է բնակչության անվտանգությունն ապահովելու համար:

Դրա հետ մեկտեղ զգուշավորությունը, կասկածամտությունը, ինչ-որ անակնկալի մշտական սպասումը՝ այս զգացմունքներն են համակել բառացիորեն յուրաքանչյուր ղարաբաղցու:

Շատ ստեփանակերտցիներ նախընտրում են հոգին թեթևացնել կուսակցության քաղաքային կոմիտեի շենքի մոտ: Արդեն երկուսուկես ամիս շարունակվող գործադուլի առաջին իսկ օրերից շենքի առջևի հրապարակը տարերայնորեն դարձել է այս կամ այն տեղեկությունն ստանալու, կարծիքներ փոխանակելու, հետաքրքիր լրագրային հրապարակումները քննարկելու, թեժ վեճերի վայր: Քաղաքացիները ձեռնպահ են մնում միտինգների և փողոցային երթերի անցկացումից:

Իսկ քաղկոմի շենքում ամեն օր անցկացվում են նրա բյուրոյի և ժողովրդական դեպուտատների քաղաքային խորհրդի գործկոմի համատեղ նիստեր:

Մասսայաբար աշխատանքի դուրս չգալու հետևանքով անմխիթար վիճակում են Ստեփանակերտի արդյունաբերական ձեռնարկությունները: Վերջին գործադուլի ժամանակամիջոցում միայն այդ ճյուղը չի թողարկել ավելի քան 20 միլիոն ռուբլու արտադրանք:

Ճանապարհներին անհանգիստ իրադրության պահպանման հետևանքով մարզի հարավային շրջաններում (դրանք արդեն շրջափակումից դուրս են) միջքաղաքային երթուղիներով մարդատար ավտոբուսների երթևեկությունը ժամանակավորապես ընդհատված է: Այդ կապակցությամբ ավելի հաճախակի են դարձել Ստեփանակերտը Հայաստանին միացնող ավիաուղերթերը:

Մոտ օրերս ինքնավար մարզ պետք է ժամանի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ԼՂԻՄ-ի հանձնաժողովը: Լեռնային Ղարաբաղի բնակչության մեծամասնությունը դրա աշխատանքի հետ որոշակի հույսեր է կապում:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Արմենպրեսի սեփ. թղթ.)

Ստեփանակերտ